ՅՕԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՏՕՆԵՐԸ ԳԱՒԱՌՈՒՄ

I

Քութայիս, 14 հոկտեմբերի

Երէկ հայ տառերի գիւտի և տպագրութեան յօբելեանի առիթով տեղիս հայոց եկեղեցում կայացաւ հանդիսաւոր պատարագ և մաղթանք։ Ապա դպրոցի դահլիճում տեղի ունեցաւ գրական առաւօտ։

Դպրոցի ահագին դահլիճը լցված էր երկսեռ բազմութեամբ։ Հանդէսը բացվեց «Մեր հայրենիք» երգով, ապա աւ.-ուսուցիչ Գրիգորեանը դրուատեց օրվայ նշանակութիւնը և Սահակի ու Մեսրոպի երախտիքը հայկական քաղաքակրթութեան և կուլտու-

*) Խօսված յիշեալ ճառերից մի քանի ուշագրաւները այս կընծայենք «Մշակի» վաղվայ համարում։ Խմբ.

բական առաջադիմութեան վրայ։ Երկու մարդուկներ արտասանեցին ոտանաւորներ, իսկ վերջումն դպրոցի հոգաբարձու Մ. Զանտրեան, օրվայ պատշաճ, վրացերէն մի հայկական բանախօսութիւն արեց, որ լաւ ազդեցութիւն գործեց հանդիսականների վրայ։

Մէջ ընդ մէջ երգում էր երգեցիկ խումբը, որը նախօրօք պատրաստել էր Երուանդ քահանան և ղեկավարում էր ինքը։ Մոռացանք յիշել, որ պատարագի միջոցին մի ազգաբար քարոզ խօսից տէր-հայրը։ Ժամը 3-ին ժողովուրդը ցրվեց լաւ տպաւորութեան տակ։

Տէր-հօր ջանքերով մի փոքրիկ գումար է հաւաքված ազգային դպրոցական ֆօնդի համար։

Ս. Նազարեան

II

Աստրախան, 9 հոկտ.

Աստրախանի Հայ-Գրական Ընկերութիւնը պատրաստվում է հայ գրերի գիւտի 1500-ամեակի և հայ տպագրութեան 400-ամեակի միացեալ տօնի ամիսով մի մեծ երեկոյթ տալու համար։

Մի շաբաթից աւել է, ինչ հրկու նկարիչներ ձեռնարկել են նկարելու տօնին յատուկ մեծագիր զանազան պատկերներ։ Նրանցից պատրաստները առայժմ ս. Մեսրոպի, ս. Սահակի և Անի կիսաւեր պարիսպի և մի քանի եկեղեցիների պատկերներն են։ Մի քանի նկարներն էլ վերցված են զանազան դրքերից և ամսագրերից։ Բոլոր նկարված պատկերները պէտք է վաճառի հանվեն, և ստացված արդիւնքը յատկացվի դպրոցական ֆօնդին։

Երեկոյթը կը բանայ Գրական Ընկ. վարչութեան նախագահ Ռ. Աստուածատրեանը, ապա տեղի կունենայ Գ. ք. Մկրտումեանի ընթերցաւոր տառերի գիւտի 1500-ամեակի և հայ տպագրութեան սկզբից մինչև ներկայ օրերիս պատմութիւնը։

Վերոյիշեալ մեծագիր պատկերների թւումն է Գր. Զանչեանի «Братская Помощь» դրքի շապկի վրայի նկարից վերցված պատկերը։ Հայաստանի հարիւրաւոր գիւղերի թշուառ բնակիչների նմուշն է այդ պատկերը։ Նա ներկայացնում է մի մշեցի կնոջ՝ իր երկու կիսամերկ երեխաներով և ուրիշ ոչինչ։

Վ. Վարդանեան